

անդաւակ լինելուն համար իւր ունեցած հարստութիւնը ազգին մանկուոյն կրթութեանց ծառայեցնելու համար՝ յատուկ կտակ մը պատրաստել է, կտակակատար կարգելով յետ մահուան իւրոյ Ս. Երուսաղէմայ Միաբանութիւնը ։

ՊԱՇՏՈՆԱԿԱՆԻՔ.

(Ի ՓԵՏՐՎԱՐ ԱՄՍՈՅ ՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՅ ՍԵՆՕԳԻ)

ՎԱՐՉԱԿԱՆԲ.

25. Փետր. Սինօղը շրջաբերականով առաջագրեց բոլոր վիճակաւոր առաջնորդներին, Կոնսիստորներին, Յաջորդներին և Հոգեւոր կառավարութեանց ըստ նախնաւանդ սովորութեան յանուն Ս. Միւռնի օրհնութեան նուիրատուութեան համար ժապաւինեալ տոմարներ տալ զործակալներին, ժողովրդեան սրտաբույի կամաւոր նուէրները օրինաւոր կարգաւ արձանագրելու և նուիրանաց հետ Սինօղին առաջարկելու համար ։

25. Փետր. Սինօղը գոհութեամբ ընդունելով Ղ. Ղլարեցի պ. Գէորգ Սալեղեանի այս տարուայ 10 բուրլի նուէրը յանուն Ճեմարանի, առաջագրեց գանձապահին գրել մուտք Ճեմարանի նուիրատուութեանց մատենանում և ապահովագիր ուղարկել նուիրատուին Աստրախանայ Յովսէփ աւագ քահանայ Բունիաթեանի ձեռքով ։

12 Փետ. Սինօղը ի նկատի ունելով Սինօղի անդամ Գեր. Յովակիմ Եպիսկոպոսի հրաժարականը, որով նորին Սրբազնութիւնը խնդրումէր արձակել նախիջեանու Վարմիր վանքի վանահայրութիւնից՝ վանահայր կարգեց նախափկայի Ս. Ստեփաննոս վանից միաբան Արժ. Յակովբ վարդապետ Տէր Արրահամեանին ։

5 Փետ. Սինօղը ըստ կոնդակի Վեհափառ կաթողիկոսի, Արժ. Յուսիկ վարդապետ Մովսիսեանին (ըստ թախանձանաց իւրոց առ Վեհափառ Հայրապետն) արձակեց վանական կառավարութեան անդամութիւնից և Արժ. Սարգիս վարդապետ Տէր Գասպարեանին նշանակեց նախագահ և նախանդամ նոյն կառավարութեան ։